ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 19/11/1

22 հուլիսի 2008թ-ին կնքված N 061991 գնման պայմանագրի

ք.Երևան «22» նոյեմբերի 2019թ.

Վարչապետի աշխատակազմն, ի դեմս պատշաճ կարգով լիազորված անձ, վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչի պաշտոնակատար Վ. Պապիկյանի, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ն, ի դեմս ընկերության գլխավոր տնօրեն Ռ. Յիրիկյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից (այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 56-րդ կետի 2-րդ ենթակետը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը լրացնել՝ համաձայն սույն Համաձայնագրի N 1 հավելվածի:

1.2 Վճարումները կիրականացվեն փաստացի մատուցված ծառայությունների դիմաց:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների կատարման ավարտը:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի N 1 հավելվածը հանդիսանում է համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է համաձայնագրի մեկ օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Վարչապետի աշխատակազմ	«ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ	ք. Երևան, Արգիշտի 4/1
Կառավարական տուն 1	«Կոնվերսբանկ» ՓԲԸ
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Հ/Հ 1930004268280100
Հ/Հ 900011022085	ՀՎՀՀ 01551651
ՀՎՀՀ 02505554	
/ ստորագրություն /	/ ստորագրություն /

Հավելված թիվ 1
« 22 » հուլիսի 2008թ. կնքված
061991 ծածկագրով պայմանագրի
« 22 » նոյեմբերի 2019թ. կնքված N 19/11/1 Համաձայնագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Բջջային հեռախոսների ծառայություններ

- Data 10500 սակագնային պլան-3 փաթեթ
  Ամսավճար 10500 դրամ
- Ինտերնետ 200 ԳԲ/ամիս
- 10 ԳԲ հավելյալ փաթեթ 1000 դրամ

*Հավելյալ փաթեթն ավտոմատ ակտիվանում է՝ կախված ընթացիկ հաշվի սահմանաչափից:

- Սույն սակագնային պլանի շրջանակներում ընթացիկ ամսվա ցանկացած օր պայմանագիրը կասեցնելու կամ խզելու դեպքում ամսավճարը գանձվում է ամբողջությամբ:
- Սակագնային պլանից հնարավոր չէ օգտվել ռոումինգում:
- Ինտերնետի փաթեթից օգտվելիս արագությունը սակագնային պլանով չի սահմանափակվում. այն կախված է տվյալ տարածքի ռադիոծածկույթից և օգտագործվող մոդեմի տեխնիկական հնարավորություններից
- Քարտի փոխարինում կորստի, արգելափակված կամ վնասված լինելու դեպքում 300 դրամ
- Ժամանակավոր կասեցում ըստ պահանջի (առավելագույնը 1 տարի) 2000 դրամ/ամիս**
- Իրական IP ակտիվացում 500 դրամ/ամիս***

*Սակագնային պլանով տրամադրվող ինտերնետ փաթեթը կարելի է սպառել ակտիվացման պահից սկսած 30 օրվա ընթացքում: Փաթեթի կրկին ակտիվացման օրը հաշվարկվում է սկսած ակտիվացման օրվանից:
**Հնարավոր է միայն անժամկետ բաժանորդագրության դեպքում:
***Գանձվում է ծառայության ակտիվացման դեպքում

SMS

- Դեպի ՎիվաՍել-ՄՏՍ-ի ցանց 5 դրամ
  Այլ ուղղություններով 20 դրամ

Բոլոր գները ներառում են ԱԱՀ:

** Վճարումները կիրականացվեն փաստացի մատուցված ծառայությունների դիմաց:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Վարչապետի աշխատակազմ	«ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ	ք. Երևան, Արգիշտի 4/1
Կառավարական տուն 1	«Կոնվերսբանկ» ՓԲԸ
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Հ/Հ 1930004268280100
Հ/Հ 900011022085	ՀՎՀՀ 01551651
ՀՎՀՀ 02505554	
/ Ստորագրություն /	/ Ստորագրություն /
Կ.Տ.	Կ.Տ.